

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆ, ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՀՈԳԵԼՈՒՅՍ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Դեկտեմբերին լրացավ Մայր Աթոռի մեծավաստակ միաբան, մեծանուն գիտնական ու հայրենասեր և հայ մշակույթի անխոնջ երախտավոր, Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակը:

Այս հիշարժան տարեդարձի առիթով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ **դեկտեմբերի 21-ին՝** հինգշաբթի օրը, ժամը 14-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ մեծանուն եկեղեցականի կյանքին ու մատենագրական վաստակին նվիրված հարգանքի հանդիսություն:

Հանդիսության նախագահում էր հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Հանդիսության ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և հրավիրյալներ:

Հանդիսությունը բացվում է «Որք զարդարեցին» Թարգմանչաց շարականի երգեցողությամբ, որը կատարում է ճեմարանի երգչախումբը:

Երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակին նվիրված հանդիսության ժամանակ հոգևոր ճեմարանի վերակացու արժանապատիվ տ. Նշան քհն. Բեյլերյանը ներկայացնում է մեծանուն եկեղեցականի կենսագրությունը:

Ճեմարանի երգչախումբը, եկեղեցական երաժշտության դասատու Հայկ Ֆրանջյանի ղեկավարությամբ, կատարում է «Յաղթող գտաւ», «Նահատակ բարի», «Նախասարկավագ», «Յաղթող և սուրբ հայրապետ», «Ալիք յանցանաց» և «Յամենայն ժամ» շարականները:

Բ լսարանի ուսանող Հովհաննես Գրվրգյանը արտասանում է Եղիշե արքեպ. Դուրյանի «Ետնեաս եկուր» բանաստեղծությունը, իսկ Գ լսարանի ուսանող Հովսեփ սրկ. Հակոբյանը՝ հ. Ղ. Ալիշանի «Հրազդան, գետակդ իմ հայրենի»-ն: Բ լսարանի ուսանող Հակոբ Նալբանդյանը ընթերցում է լուսահոգի Տ. Տ. Գարեգին Ա Վեհի գրվածքներից, քարոզներից քաղված գոհար մտքեր ու խորհրդածություններ:

Այնուհետև մեծանուն եկեղեցականի և բազմավաստակ գիտնականի կյանքի ու գործունեության նվիրված բովանդակալից զեկույցով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամ, պատմական գիտությունների թեկնածու, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտական աշխատող Սուրեն Քոլանջյանը:

Հանդիսության վերջում հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, մի անգամ ևս ոգեկոչելով հիշատակը Մայր Աթոռի մեծանուն միաբանի, հայրենասեր գիտնականի ու մեծ եկեղեցականի, կոչ է անում ուսանողության՝ հավատարիմ մնալ ս. Էջմիածնի միաբանության, եկեղեցաշեն,

կրթանվեր, մատենագրական այն ավանդություններին, որոնցով փառավորվել է միշտ Մայր Աթոռի պատմությունը ու հարստացել հայ մշակույթի և մեր եկեղեցական արվեստի գանձարանը:

Տ. Տ. Գարեգին Ա Վեհի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված տերունական աղոթքով:

Դեկտեմբերի 24-ին՝ կիրակի օրը, Մայր տաճարում մատուցվում է հանդիսավոր ս. պատարագ:

Հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը քարոզում է «զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի» (Բ Տիմ. Դ 7) բնաբանով, այն գեղեցկորեն պատշաճեցնելով երանաշնորհ Տ. Գարեգին Վեհի կյանքին և գործունեությանը, նրա ծննդյան հարյուրամյակի առիթով:

«Հայր մեր»-ից առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ երանաշնորհ Տ. Տ. Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցի մահվան տասնհինգերորդ տարելիցի առիթով:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցին»: